

**4.2.2. Ներքին զբոսաշրջություն**

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2014թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել է 859 703 զբոսաշրջիկ (ՀՀ ռեզիդենտներ)<sup>1</sup>, ինչը 2013թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 28.4%-ով:

**Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի**

*մարդ*

	2013թ. հունվար- դեկտեմբերին	Տեսակարար կշիռը (2013թ. հունվար- դեկտեմբերին, %)	2014թ. հունվար- դեկտեմբերին	Տեսակարար կշիռը (2014թ. հունվար- դեկտեմբերին, %)	Աճի տեմպը, %
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ<sup>2</sup></b>	<b>669 540</b>	<b>100.0</b>	<b>859 703</b>	<b>100.0</b>	<b>128.4</b>
որոնցից ըստ նպատակի՝					
գործնական	156 685	23.4	189 465	22.0	120.9
հանգստի և ժամանցի	381 152	56.9	540 375	62.9	141.8
բուժման	59 903	8.9	84 133	9.8	140.4
այլ	71 800	10.7	45 729	5.3	63.7

<sup>1</sup>Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն՝ որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

<sup>2</sup>Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին: